*Հաստատված է*

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի

2016 թ. մարտի 17-ի նիստում ընդունված N 1 որոշմամբ

Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ԳԽ նախագահ՝

Ն. Ն. Մարտիրոսյան ----------------------

# ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2020 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ՊԼԱՆ)

Երևան-2016

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

## I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:* | | | | | | | | | | |
| **1.** Վերամշակել Ժուռնալիստիկայի ֆակուլտետում գործող մագիստրոսի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան.<br>1.1. Գնահատել ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերը, դուրս բերել դրանց ուժեղ և թույլ կողմերը, ըստ անհրաժեշտության վերանայել ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը:<br>1.2. Վերանայել մոդուլ դասընթացները՝ հաշվի առնելով համապատասխանաբար PR և հաղորդակցության ոլորտների, միջազգային և քաղաքական ժուռնալիստիկայի արդի մարտահրավերները և գործատուի պահանջները: | | X | X | | | | | | | |
| **2.** Ստեղծել «Լրագրություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով: | | X | | | | | | | | |
| **3.** Վերամշակել Ժուռնալիստիկայի ֆակուլտետում գործող բակալավրի կրթական ծրագիրը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:<br>3.1. Գնահատել «Լրագրություն» բակալավրական ծրագիրը, դուրս բերել դրա ուժեղ և թույլ կողմերը, ըստ անհրաժեշտության վերա- | | X | X | X | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| նայել ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը:<br>3.2. Վերանայել մոդուլ դասընթացները՝ հաշվի առնելով մեդիա-<br>ոլորտի արդի մարտահրավերները և գործատուի պահանջները:<br>3.3. Վերանայել գործող բակալավրական «Լրագրություն» ծրագրի<br>նպատակի և կրթական վերջնարդյունքների համապատասխանու-<br>թյունը: Վերանայել կրթական վերջնարդյունքների ձեռքբերման,<br>գնահատման մեթոդները: | | | | | | | | | | |
| **4.** Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական<br>նոր ծրագրեր Սոցիալական հոգեբանության և Մշակութաբանու-<br>թյան ամբիոնների հետ: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| **5.** Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղ-<br>ված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրա-<br>ժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Արտադրական<br>պրակտիկայի իրականացման համար առաջնայնություն տալ հան-<br>րապետությունում առավել մեծ կշիռ ունեցող լրատվամիջոցներին:<br>Այս առումով համագործակցել նաև գերատեսչությունների, տար-<br>բեր կազմակերպությունների (միջազգային, բիզնես, հասարակա-<br>կան) հանրային կապերի բաժինների և վարչությունների հետ: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրա-<br>խուսման և տարածման ներհամալսարանական և ներֆակուլտե-<br>տային մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մե-<br>թոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:<br>1.1. Ֆակուլտետի ամբիոնային և մեթոդխորհրդի նիստերում կազ-<br>մակերպել պարբերական քննարկումներ՝ ուղղված կիրառվող<br>ուսուցման մեթոդների արդյունավետության բարձրացմանը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆոր-<br>մատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական<br>վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատաս-<br>խան մեթոդական հենք և ձեռնարկներ: | | | | | | | | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.** Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով: 3.1. Ուսումնասիրությանը ակտիվ մասնակից դարձնել ֆակուլտետի կազմում գործող մեդիահետազոտությունների կենտրոնին: Ուսումնասիրել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ինտեգրման միջազգային փորձը, համեմատել ֆակուլտետի փորձի հետ, վեր հանել ուժեղ և թույլ կողմերը: Արդյունքները քննարկել ֆակուլտետի ամբիոններում, ձևավորել առաջարկներ: Դրանք քննարկել ֆակուլտետի գիտխորհրդում: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **4.** Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով: 4.1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների շրջանակում նախատեսել նախագծերի իրականացում (ռադիոնախագիծ, հեռուստանախագիծ և այլն), որոնք կհանձնարարվեն ամբիոնների կողմից և կիրականացվեն ֆակուլտետի տեխնիկայով, գիտական ղեկավարների հսկողությամբ: | X | X | X | X | X | X | | | | |
| *Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:* | | | | | | | | | | |
| **1.** Փորձնական սկզբունքով ստեղծել Ժուռնալիստիկայի ֆակուլտետի կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում: | X | X | | | | | | | | |
| **2.** Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար: 2.1. Ֆակուլտետի Գիտական խորհրդի նիստերում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, լսել ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունները ծրագրերի | | | | | | | X | X | X | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրականացման ընթացքի և վերանայման անհրաժեշտության մասին,<br>2.2. Քննարկել ծրագրերի լրամշակման հարցը ֆակուլտետի մեթոդական խորհրդում և ներկայացնել բարեփոխված ծրագրերը Գիտական խորհրդի հաստատմանը: | | | | | | | | | | |
| **3.** Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ամբիոններում:<br>3.1. Մշակել ֆակուլտետի դասախոսների գործունեության գնահատման կարգ: Դասախոսի գործունեության գնահատման կարգում ներառել ամբիոններում գործընկեր-դասախոսների կողմից իրականացվող դասալսումների արդյունքները, ուսանողների անանուն սոց.հարցումների տվյալները և դասախոսի գիտամանկավարժական գործունեության ցուցանիշները (գիտական հոդվածների քանակ, հրատարակված հոդվածների հանդեսների վարկանիշ, մասնակցություն միջազգային գիտաժողովներին, այդ թվում՝ բանավոր զեկույցով, հրավիրված դասախոսություններ և արտասահմանում վերապատրաստումներ, հայերենով հրատարակված դասագրքերի, ԵՊՀ կայքում զետեղված դասախոսությունների առկայություն, միջազգային համագործակցության առկայություն և այլն): | | | X | X | X | X | X | | | |
| *Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:* | | | | | | | | | | |
| **1.** Ներդնել և շահագործել բակալավրական ծրագրի որևէ մասնագիտական մոդուլ-դասընթացի վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Վերապատրաստել Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ամբիոնների դասախոսական կազմերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար: | | | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:<br>3.1. Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ամբիոններում պատրաստել դասախոսությունների ձեռնարկներ, ինչպես նաև դասախոսու- | | | | | | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| թյունների ցուցադրական նյութեր, լրացուցիչ այլ գրականություն, գիտական հոդվածներ և խմբավորել դրանք ըստ մոդուլների և ներկայացնել կրթական ծրագրերի ղեկավարներին:<br>3.2. Առցանց տիրույթում հասանելի դարձնել հայ մամուլի համահավաք գրացուցակը և հայկական պարբերականների թվայնացված տարբերակները (Մամուլի պատմության և տեսության ամբիոն): | | | | | | | | | | |
| **4.** Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:<br>4.1. Առկա ուսուցման դասընթացների համար պատրաստված առցանց նյութերը պարտադիր կիրառել նաև հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների համար: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **5.** Կանոնակարգել և ընդլայնել Ժուռնալիստիկայի ֆակուլտետում առցանց եղանակով իրականացվող դասընթացները:<br>Կազմել դասընթացների ցանկ, համառոտ նկարագրություն, ժամանակացույց և դասատախտակ: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

## II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:* | | | | | | | | | | |
| **1.** Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրապարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:<br>1.1. Իրականացնել Ֆակուլտետում գործող մեդիահետազոտությունների կենտրոնի, ինչպես նաև Մամուլի պատմության և տեսության և ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնների դասախոսների գիտահետազոտական գործունեության ամենամյա գնահատում՝ առաջնորդվելով յուրաքանչյուրի գիտական արդյունքով (հոդվածների քանակ, հրատարակված հոդվածների հանդեսների վարկանիշ, գիտական հրատարակումների վրա կատարված հղումների թիվ, մասնակցություն միջազգային գիտաժողովներին և այլն): | | | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ընդլայնում:<br>2.1. Ընդլայնել ֆակուլտետում գործող Մուլտիմեդիա լաբորատորիայում և ֆակուլտետի ամբիոններում իրականացվող գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը:<br>2.2. Մասնակցել ՀՀ ԳՊԿ կողմից հայտարարված դրամաշնորհների մրցույթներին՝ ապահովելով ֆակուլտետի ասպիրանտների և մագիստրանտների ընդգրկումն այդ հայտերում: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.1. ՌԻԳԸ տարեկան գիտական նստաշրջանների պատասխանատու քարտուղարի աջակցությամբ իրականացնել մշտական հսկողություն ուսանողների կողմից տարվող գիտահետազոտական աշխատանքներին:<br>3.2. Ապահովել ուսանողների մասնակցությունը ֆակուլտետում գործող մեդիահետազոտությունների կենտրոնի գիտահետազոտական աշխատանքներում: | | | | | | | | | | |
| **4.** Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:<br>4.1.Վերանայել ֆակուլտետում գործող բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերում գիտելիքների ստուգման մեթոդները՝ ավելացնելով հետազոտական բաղադրիչը. դասընթացների շրջանակում հանձնարարել հետազոտություններ, վերլուծություններ և այլն: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| 5. Վերանայել և ըստ ԲՈՀ-ի առաջադրած պահանջների վերսկսել «Ժուռնալիստիկա. տեսության և պատմության հարցեր» պրակի տպագրությունը: | | | X | X | X | X | X | X | X | X |
| 6. Կազմակերպել ամենամյա ֆակուլտետային գիտաժողովներ: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 2.2. Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:* | | | | | | | | | | |
| **1.** Ներգրավել հանրապետության մեդիաոլորտի առաջատար փորձագետներին և գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:<br>2.1. Մշակել և իրականացնել Հայաստանում և արտերկրում գործող գիտահետազոտական կենտրոնների հետ ծրագրերի իրականացման ռազմավարություն: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.** Նպաստել մեդիաձեռնարկությունների, հրատարկչությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 2.3. Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին:* | | | | | | | | | | |
| **1.** Նպաստել ֆակուլտետի ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը:<br>1.1 Խթանել ֆակուլտետի ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությունը:<br>1.2. Ֆակուլտետի ասպիրանտներին ընդգրկել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած և այլ դրամաշնորհների ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և արտերկրի տարբեր գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող ծրագրերում: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

# III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Գործողություն/<br>միջոցառում/<br>ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) |
| *Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը:<br>1.1. Մշակել ֆակուլտետային PR ռազմավարություն, որի հիմնական խնդիրներից կլինի ֆակուլտետի և բուհի դրական իմիջի պահպանումը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը:<br>2.1 Մշակել առանձին թիրախային լսարանների հետ հաղորդակցման ռազմավարական պլան: Իրականացնել տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներ, հատուկ միջոցառումներ:<br>2.2 Իրականացնել ԵՊՀ իմիջի ընկալման վերաբերյալ պարբերական հետազոտություններ:<br>2.3 Ապահովել սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքում հետադարձ կապի հնարավորություն: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 3.2. Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:* | | | | | | | | | | |
| **1.** Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:<br>1.1. Իրականացնել կարճաժամկետ դասընթացներ գործող լրա- | | | | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գրողների համար, ովքեր չեն ստացել մասնագիտական կրթություն: 1.2. Իրականացնել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ մասնագիտական կրթություն ստացած գործող լրագրողների համար՝ մեդիադաշտի զարգացման և ոլորտի մարտահրավերների առկայությամբ պայմանավորված: 1.3. Մշակել գերատեսչությունների, տարաբնույթ կազմակերպությունների (բիզնես, հասարակական, միջազգային և այլն) PR բաժինների աշխատակիցների համար նմանատիպ դասընթացների ծրագիր: | | | | | | | | | | |

## IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 4.1. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը:* | | | | | | | | | | |
| **1.**Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:<br>1.1. Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության հետ համատեղ իրականացնել ֆակուլտետի դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:<br>1.2. Ֆակուլտետի առաջատար մասնագետների աջակցությամբ մշակել ժուռնալիստիկայի ժամանակակից հիմնահարցերին առնչվող դասընթացներ՝ նախատեսված ներֆակուլտետային և հարակից (կամ այլ) մասնագիտության դասախոս-ունկնդիրների համար և Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության հետ համատեղ դրանք ներդնել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրում: | X | | | | | | | | | |
| **2.** Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:<br>2.1. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների համար դասավանդման և ուսուցման մեթոդների ուղեցույց (մասնագիտության համատեքստում):<br>2.2 Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների համար ուսանող-դասախոս հաղորդակցման հմտությունների և էթիկայի վերաբերյալ դասընթաց: | | X | | | | | | | | |
| **3.** Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների: | | X | X | X | | | | | | |

## V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 5.2. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:* | | | | | | | | | | |

## VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 6.1. Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:* | | | | | | | | | | |
| **1.** Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկ-տուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչո-ղական բնույթի միջոցառումները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Խթանել ֆակուլտետի ուսանողների կարիերայի ծառայություն-ները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համա-կարգը:<br>3.1. Մշակել խրախուսման մեխանիզմներ միջազգային և հասարա-կական կազմակերպությունների կամավորական ծրագրերում Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ակտիվորեն ներգրավված ուսա-նողների համար: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվու-թյունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսա-նողների համար:<br>3.1. Ֆակուլտետային journalist.am կայքի հնարավորությունները օգտագործել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար տեղեկատվություն փոխանցելու, խորհրդատվություն իրականացնելու համար: | | | X | X | X | X | | | | |
| **4.** Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և Ժուռնալիստիկայի ֆակուլտետի շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին և ֆակուլտետին տա-րաբնույթ աջակցության նախաձեռնությունները:<br>4.1. Մշակել Ժուռնալիստիկայի ֆակուլտետի շրջանավարտների | | | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| տվյալների առցանց բազա:<br>4.2. Կազմակերպել ամենամյա հանդիպումներ ֆակուլտետի շրջանավարտների հետ:<br>4.3. Ֆակուլտետի շրջանավարտների ներուժն օգտագործել ֆակուլտետային և համալսարանական PR-ն իրականացնելու գործում: | | | | | | | | | | |

## VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը:<br>1.1. Աջակցել Մինչհամալսարանական կրթության վարչությանը դիմորդների ուղեցույցների, մասնագիտական կողմնորոշմանը նպաստող բուկլետների կազմման և հրատարակաման աշխատանքներում: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար «Ստեղծագործական աշխատանք» առարկայի գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպել «Մեդիագրագիտություն» թեմայով «Ամառային դպրոցներ» հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **4.** Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետ: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **5.** Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել Ժուռնալիստիկային և մեդիագրագիտությանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվական նյութերով: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **6.** Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ֆակուլտետի դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ | X | X | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը՝ ապահովելով ֆակուլտետի լավագույն մասնագետների մասնակցությունը այդ գործում:<br>6.1. Մինչհամալսարանական վարչության միջոցով կապ հաստատել ավագ դպրոցների տնօրինությունների հետ, ձեռք բերել պայմանավորվածություններ և կատարել այցելություններ: Կազմել մայրաքաղաքի ավագ դպրոցների այցելության ժամանակացույց: | | | | | | | | | | |
| **7.** Ֆակուլտետի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **8.** Ֆակուլտետի դիմորդների լրագրողական և գրական լավագույն ստեղծագործությունները տեղադրել journalist.am ֆակուլտետային կայքում: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| **9.** Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա հանդիպումներ, որտեղ կներկայացվեն «Բանավոր հաղորդակցման մշակույթ» և «Ստեղծագործական աշխատանք» առարկաների նպատակն ու խնդիրները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

## VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

| Գործողություն/<br>միջոցառում/<br>ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) | I<br>Կիս.<br>(01-06) | II<br>Կիս.<br>(07-12) |
| *Խնդիր 8.1. Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:* | | | | | | | | | | |
| **1.** Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները:<br>1.1. Կազմակերպել վճարովի դասընթացներ մասնագիտական կրթություն չունեցող լրագրողների համար:<br>1.2. Կազմակերպել վճարովի դասընթացներ PR ոլորտի մասնագիտական կրթություն չունեցող աշխատակիցների համար:<br>1.3. Կազմակերպել վճարովի վերապատրաստման կուրսեր մասնագիտական որակավորում նախկինում ստացած մասնագետների համար: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ ֆակուլտետի շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **4.** Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Համալսարանի նոր կանոնադրությանը: | X | X | X | X | | | | | | |
| **5.** Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Խնդիր 8.2. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:* | | | | | | | | | | |
| **1.** Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ: | X | X | X | X | X | X | | | | |

## IX.. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 9.1. Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:* | | | | | | | | | | |
| **1.** Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ:<br>2.1. Ստեղծել ֆակուլտետի հետ համագործակցող արտերկրյա առաջատար գիտնականների տվյալների բազա՝ այնտեղ ընդգրկելով վերջիններիս կոնտակտային տվյալները, գիտակրթական կազմակերպության անվանումը, գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ: | | X | X | X | X | X | X | X | X | |